

Եւ մեծ իրաց. եւ կամ չհաւանին յանձն առնուլ եւ ընդդիմանան, (եւ) չկարացեալ¹ կալ առաջի այսպիսի մեծի ուժոյ՝ կորնչին ամենեւիմբ տամբք եւ կարասեալ. կորնչի թերեւս եւ իմ թշնամին յիրիս յայսմիկ: 17 Եւ ես թեպէտ եւ ոչ միոյ այլ իմիք չհանդիպիմ բարւոյ՝ սակայն շատ իսկ է ինձ եւ բաւական լուրն եւ տես կորստեան թշնամւոյ իմոյ քան զամենայն աւգուտս եւ մեծութիւնս որ եւս² յաշխարհի»:

18 Եւ զայս ամենայն չար իմացմունս անձին իւրում եւ զաւակի, իմացեալ Սիւնւոյ սեպիին անաւրինի եւ տարեալ ի գլուխ՝ չմոռացաւ եւ աստուածային տեսչութիւնն. այլ աստէն իսկ նախ ընկալեալ յարդար դատաստանէն Աստուծոյ զվճիռ հատուցման ըստ արժանի գործոց իւրոց. քանզի տեսիլ նշաւակի եղեւ ամենայն տոհմին իւրոյ եւ գաւառին մարդկան: 19 Վասն զի ի խորհրդակցէն, ի դիւէն իւրմէ, տանջեալ ամս բազումս առաջի ամենեցուն հանապազաւր նշաւակաւք, զգետնեալ փրփրէր անզգայութեամբ, եւ չկարացեալ ասել, թէ մեղայ: 20 Վասն որոյ գտեալ դիւին ամենաթափուր զայրն ի խնամոց մարդասիրին՝ յետոյ ապա սաստիկ եւ անհնարին³ խայտառակաւաւք մինչ ի բազում ժամանակս չարալլուկ կտտանաւք զարկուցեալ՝ հեղձոյց: 21 Որ եւ զմնացորդս ժահահոտ չարահամ խորտկին իւրոյ եթող զաւակին իւրում, ըստ գրեցելումն ի վեշտասաներորդումն սաղմոսին. *Յագեցան կերակրաւք, ասէ,- որ միւս եւս թարգման*⁴ *խոզենեալ ասէ,- եւ թողին զմնացուածս*⁵ *տղայոց իւրեանց*⁶: 22 Եւ այսպէս նորա աստէն ընկալեալ զհատուցումն մեղաց իւրոց՝ պահի եւ անշէջ գեհէնոյն ի տարտարոսին՝ մատնել յաւիտենից եւ անանց բոցոյն: 23 Յորոց ձեռն սկիզբն առեալ զայր տակաւ յերեւումն⁶ կանխաւ տեսութիւն մարգարեական սուրբ նահատակին Գրիգորի տեսլեանն, որ երեւեցաւ նմա յԱստուծոյ. աղբիւրն կենաց, յորում լուացեալ դասք սեւագոյն այծեացն, ի սպիտակակիզն⁷ գոյն⁸ աւղեաց դարձեալք՝ արեգակնանման լուսափայլեալք երեւէին. յորոց կեսք ի լուացելոցն յետս դարձեալք ընդ կրունկն⁹՝ անցանէին ընդ շուրն, եւ փոխեալք ի նմանութենէ սպիտակացեալ գառանցն ի գոյն սեւացեալ գայլոցն՝ յարձակէին ի վերայ գա-

1 ՁՏՏ. եւ ընդդիմանան, չկարացեալ

2 Ձ. որ էն

3 ՏՏ. սաստիկ անհնարին

4 ՏՏ. թարգմանիչ

5 Ձ. թողին զանցուածս

Ս Սաղմ. ԺԶ 14

6 ՁԱտ. երեւումն

7 Ձ. քերուածի վրայ գրուած՝ ի սպիտակակիզն

8 Ձ. լուսանցքում ունի տարբեր գրչով գոյն

9 ՏՏ. ընդ կրունկս